ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

Շնորհակալ եմ քեզանից հավետ և երախտապարտ,
Որ իմ մեջ դեռևս մանուկ հասակից սերմանեցիր դու
Սերը ճշմարտին, երկյուղն Աստուծո,
Օրհնել ուսուցիր անիծելու տեղ,
Աղոթքի կանգնել, որ երբ կամենա, հաղորդվեմ, խոսեմ
Իմ Արարչի հետ:
Սեր սերմանեցիր իմ մատաղ հոգում՝ փոխարեն քենի և ատելության
Ու վստահություն ներշնչեցիր ինձ փոխան կասկածի,
Օգնել ուսուցիր՝ խարդախ լինելու, գողանալու տեղ,
Գութ ու կարեկցանք՝ փոխան մախանքի,
Հույս ներշնչեցիր անհուսությունը դիմագրավելու:
Աղքատության մեջ ինքնասիրությամբ թրծեցիր դու մեզ,
Գոռոզության տեղ մեզ համեստություն ուսուցանեցիր,
Զոհաբերության ոգի տվեցիր փոխան անհագուրդ,
Ընչաքաղցության,
Փորձության պահին՝ պատվախնդրություն դու ներշնչեցիր:
Նեղության առաջ սովորեցրիր մեզ չընկրկել բնավ,
Բարկության պահին՝ լինել համբերող և անհիշաչար:
Իմ անձն կավին ձև ու կերպ տվիր առաքինական,
Այնպես, ինչպես դու ստացել էիր քո ծնողներից:
Ինձ դարձրիր անոթ վերին կոչունքի սպասարկության,
Վառեցիր իմ մեջ ջահը հավատի հանդեպ Արարչի և հայրենիքի՝
Սիրելու ազգն իմ, հարազատներն իմ, լույս ու աշխատանք:

Քեզ բյո՜ւր օրհնություն, գոհ եմ Տիրոջից, որ եղել եմ ես
Քո իսկ զավակը և քո միջոցով ծնվել եմ տանջված,
Բայց խաղաղասեր, բայց խաղաղարար իմ ազգի ծոցում:

Եվ ես որպես հայ, իմ ծնված օրից քեզ հետ և բազում
Ազգակիցների,
Բռնադատվել եմ ճաշակելու միշտ դառնություն ու վիշտ,
Դրանով էլ հենց արժանանալով մեծագույն պատվին՝
Դառնալու խոնարհ չարչարակիցը բյուր չարչարանաց
Հիսուս Քրիստոսի:

4 նոյեմբեր 1989